# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-50-2023
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «26» հունվար 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1056. Կինոմատոգրաֆիայի ծրագրի» ծրագրի «11005. Աջակցություն կինոարվեստին» միջոցառման (տող՝ «Միջազգային կինոփառատոններին, կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Բեռլինի միջազգային կինոփառատոնին կից կայանալիք Եվրոպական կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցություն կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկված գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և (կամ) ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

**2.3. Պետական մարմինը պարտավոր է՝**

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

**2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստաց

ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,**

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է հատկացնում է **3736,3 հազար** (երեք միլիոն յոթ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպության հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետում նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել սույն նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. փետրվարի 23-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

## 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | «Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ |
| ք.Երևան,Կառավարական 2 շենք | ք.Երևան, Տերյան 3ա |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ 900011033348 | Հ/Հ 900018001744 |
| ՀՎՀՀ 02698732 | ՀՎՀՀ 01203271 |
| Գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող՝ | Տնօրենի պաշտոնակատար՝ |
| Կ.Տ. _____ Վ. Գասպարյան /ստորագրություն/ | Կ.Տ. _____ Շ. Միրզախանյան /ստորագրություն/ |

Հավելված N 1
«27» «01» 2023 թ.
N ՄՇԴ-50-2023 պայմանագրի

# ԾՐԱԳԻՐ

Բեռլինի միջազգային կինոփառատոնին կից կայանալիք Եվրոպական կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցություն

| | | |
|---|---|---|
| 1 | Կազմակերպության անվանում | «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ |
| 2 | Կազմակերպության գտնվելու վայր | Հայաստան, Երևան, Տերյան 3ա |
| 3 | Ծրագրի անվանում | Բեռլինի միջազգային կինոփառատոնին կից կայանալիք Եվրոպական կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցություն |
| 3.1 | Բովանդակություն | Ամեն տարի Բեռլինի կինոփառատոնի շրջանակներում անցկացվում է Եվրոպական (Բեռլինյան) կինոշուկան, որը 2023 թվականին կայանալու է փետրվարի 16-ից 22-ը: Բեռլինյան կինոշուկան աշխարհում հայտնի է որպես ամենապահանջվածներից մեկը՝ տեսաձայնային արվեստի խթանման, համատեղ արտադրության ֆիլմերի գործընկերների, ինչպես նաև տարբեր կինոնախագծերի և ֆիլմերի վերականգնման ֆինանսավորման աղբյուրների որոնման համար:<br>2023 թ. Հայաստանի ազգային կինոկենտրոնը նախատեսում է մասնակցել Եվրոպական կինոշուկային (փետրվարի 16-22-ը)՝ իրականացնելով ստույգ ռազմավարական նպատակներ.<br>2023թ. հոբելյանական տարի է հայ կինոյի համար, ապրիլի 16-ին լրանում է հայ կինոյի հիմնադրման հարյուրամյակը: Կինոկենտրոնը նախատեսում է ամբողջ տարվա ընթացքում կազմակերպել հոբելյանական միջոցառումների շարք՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Հոբելյանական միջոցառումների նախաշեմին Կինոկենտրոնը նախատեսում է Բեռլինի կինոշուկայում միջազգայնացնել հայկական կինոժառանգությունը, ամրապնդել հայ կինոարվեստի ճանաչմանն ուղղված կապերը, քարտեզագրել հայկական կինոարտադրանքի տարածման և արժևորման քայլերը: Մասնավորապես, նախատեսվում են հանդիպումներ տարբեր հեղինակավոր կինոփառատոների և հարթակների ներկայացուցիչների հետ՝ հայկական կինոժառանգության վերականգնված ֆիլմերի և/կամ հետահայաց ցուցադրությունների պայմանավորվածություններ ձեռք բերելու համար:<br>2023թ-ին կայանալիք Եվրոպական կինոշուկային հայաստանյան ներկայացուցիչների մասնակցությունը կարևորվում է վերոնշյալ նախաձեռնությունների իրականացման, Եվրոպական /Բեռլինյան/ կինոշուկայում Հայաստանի մասնակցության շարունակականության ապահովման, հայ կինոոլորտի ձեռքբերումների ամրապնդման, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքավորման և միջազգային համագործակցության |

| | | |
|---|---|---|
| | | զարգացման համար:<br>Հայկական պատվիրակության գործունեությունը ապահովելու համար նախատեսվում է Եվրոպական կինոշուկայում վարձակալել Հայկական տաղավար (11 քմ)՝ պահպանելով պատշաճ մասնակցության բոլոր չափանիշները, ինչի համար նախատեսվում է.<br>- տաղավարը հագեցնել համապատասխան տեխնիկական սարքավորումներով և անհրաժեշտ կահույքով,<br>- տպագրել 2022-2023 թթ. հայկական կինոինդուստրիան նկարագրող կատալոգ, որը նաև հասանելի կլինի օնլայն՝ QR կոդը ներբեռնելով,<br>- տաղավարի ձևավորման համար անհրաժեշտ նյութերի տպագրություն Բեռլինում,<br>Որպես կինոշուկայում ընդունված ավանդույթ՝ նախատեսվում է հայկական տաղավարում կազմակերպել հյուրասիրություն՝ Happy Hour, որին կհրավիրվեն տարբեր երկրների կինոկենտրոնների տնօրենները, կինոֆոնդերի ներկայացուցիչները, պրոդյուսերներ և այլք: Happy Hour հյուրասիրության շրջանակներում հայկական տաղավարում կցուցադրվի հայ կինոյի 100-ամյակին նվիրված տեսահոլովակ, հյուրերին կներկայացվի հարյուրամյակի շրջանակներում իրականացվող ծրագրերն ու միջոցառումների ցանկը:<br>2020թ. հայկական տաղավարի հանդիսավոր բացմանը Happy Hour-ին մասնակցել են մոտ 150 հյուրեր, այդ թվում՝ տարբեր երկրների կինոկենտրոնների և կինոֆոնդերի տնօրեններ,<br>կինոգործիչներ, որոնց հետ Հայաստանի ազգային կինոկենտրոնը սերտորեն համագործակցում է:<br>Հարկ է նշել նաև, որ միայն Բեռլինյան կինոշուկան ունի կինոարտադրության գործընկերների որոնման ռազմավարական COPRO MARKET բաժինը, այսպիսով, որպես գործնական հարթակ, Բեռլինյան կինոշուկան լայն հնարավորություններ կստեղծի հայկական նախագծերի առաջխաղացման համար:<br>Հեղինակավոր կինոկազմակերպությունները բաց չեն թողնում Բեռլինյան կինոշուկան, Հայաստանի ազգային կինոկենտրոնը նախատեսել է հետևյալ հանդիպումները (հարկ է նշել, որ որոշ նշված կազմակերպությունների հետ Կինոկենտրոնի համագործակցությունը շարունակական բնույթ է կրում):<br>Մարտին Սկորսեզեի «Համաշխարային Ֆոնդի» ներկայացուցիչ Սեսիլիա Սենսիարելիի հետ (Film Foundation)՝ քննարկել<br>-Ս. Փարաջանովի «Նռան Գույնը» ֆիլմի վերականգնման պայմանագրի մեջ փոփոխությունների հնարավորությունը,<br>-2023թ. Բոլոնիա քաղաքում կայանալիք II Cinema Ritrovato արխիվային ֆիլմերի կինոփառատոնին Հ. Բեկնազարյանի ֆիլմերի ցուցադրության և պաստառների ցուցահանդեսի կազմակերպման մանրամասները հայ կինոյի 100-ամյակի շրջանակներում:<br>Բեռլին Կլասիկս՝<br>Հայ կինոյի հարյուրամյակի շրջանակներում նախատեսվում են |

| | | |
|---|---|---|
| | | բանակցություններ Berlin Classics-ի հետ՝ 2024թ-ի ծրագրում հայկական դասական ֆիլմ/ֆիլմեր ներառելու նպատակով:<br>EFAD /Եվրոպական կինոգործակալություններ/ կազմակերպության հետ՝<br>Քննարկել Հայաստանի ազգային կինոկենտրոնի կազմակերպությանը անդամակցության հնարավորությունը:<br>Լատվիայի Locomotive Classics ֆիլմեր վերականգնող կազմակերպության ներկայացուցիչ Ռոբերթս Վինովսկիսի հետ՝<br>Քննարկել Ֆ. Դովլաթյանի «Բարև, ես եմ» ֆիլմի վերականգնման աշխատանքները՝ ֆիլմը 2023թ. Cannes Classics բաժին ներկայացնելու համար:<br>«Կինոկլասիկա» բրիտանական ֆոնդի տնօրեն Ժուստին Վադելի հետ (Kino Klassika Foundation)՝<br>-հայ կինոյի 100-ամյակի շրջանակներում քննարկել «Կլասիկի» սթրիմինգային հարթակում, ինչպես նաև կազմակերպության հետ համագործակցող Լոնդոնի Leeds Cinema Hall և the Lumiere Cinema Hall կինոթատրոններում հայկական դասական ֆիլմերի ցուցադրության հնարավորությունը:<br>-Էստոնիայի Կինոկենտրոնի հետ՝<br>Քննարկել համագործակցության հնարավորությունները<br>-WCF – համաշխարային կինոֆոնդի հետ՝<br>Քննարկել համագործակցության հնարավորությունները<br>Ֆրանսիայի Կինոկենտրոնի (CNC) միջազգային կապերի գծով տնօրեն Միշել Պլազանեի հետ՝<br>Վերսկսել համատեղ արտադրության վերաբերյալ միջպետական պայմանագրի շուրջ բանակցությունները:<br>Եվրիմաժի հետ՝<br>Քննարկել Եվրիմաժի Կառավարման Խորհրդի 2023թ. նոյեմբեր ամսվա նիստը Հայաստանում անցկացնելու մանրամասները:<br>FOCAL կինոյի և աուդիովիզուալ մեդիաոլորտի պրոֆեսիոնալ թրեյնինգների հիմնադրամի MEDICI թրեյինգների ղեկավար Տամարա Տատիշվիլիի հետ՝<br>Քննարկել 2024թ-ին MEDICI եռօրյա թրեյնինգներն ու սեմինարները Հայաստանում անցկացնելու հնարավորության մանրամասները:<br>Վրաստանի ազգային կինոկենտրոնի հետ՝ Քննարկել 2023թ. հայ կինոյի հարյուրամյակին նվիրված համատեղ միջոցառումների կազմակերպման մանրամասները ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում:<br>Լիտվայի ազգային կինոկենտրոնի տնօրեն Լայմնս Ուբավիչուսի հետ՝<br>Հաշվի առնելով հայ -լիտվական համատեղ ֆիլմարտադրության դրական դինամիկան՝ քննարկել Հայաստանի եվ Լիտվայի միջև համատեղ կինոարտադրության պայմանագրի կնքման հնարավորությունը:<br>«Համո Բեկ-Նազարյան» նախագծի բրիտանացի պրոդյուսեր Դենիել Բըրդի հետ՝<br>Քննարկել և համաձայնեցնել «Անհայտ Փարաջանով» ֆիլմի |

| | | |
|---|---|---|
| | | սցենարի զարգացման մանրամասները: Ֆիլմը պետք է նկարահանվի Ս.Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի հիմնական մոնտաժից դուրս մնացած և վերականգնված կադրերի հիման վրա:<br>Սալենտո միջազգային կինոփառատոնի տնօրեն Լուիջի Կամպանիլեի հետ՝<br>Բանակցել 2023թ. սեպտեմբերին կայանալիք Իտալիայի Սալենտո միջազգային կինոփառատոնում հայ կինոյի 100-ամյակի շրջանակներում «Հայաստանը ուշադրության կենտրոնում» հայկական լայնածավալ ծրագիրն իրականացնելու մասին:<br>Եվրոպական Աուդիովիզուալ Օբսերվատորիայի հետ՝<br>Ձեռք բերել Օբսերվատորիայի և Հայաստանի միջև համագործակցության առավել ակտիվ տարբերակների մասին պայմանավորվածություն, հաշվի առնելով հայ կինոարդյունաբերության այժմյան կարգավիճակը: |
| 3.2 | Նպատակ | 2023 թվականին հայ կինոյի հոբելյանին ընդառաջ Կինոկենտրոնի նպատակն է հանդիպումներ իրականացնել և պայմանավորվածություններ ձեռք բերել միջազգային տարբեր կինոփառատոների, այդ թվում նաև Berlin Classics -ի և այլ հեղինակավոր հարթակների հետ՝ 2023-2024թթ. հայկական ժառանգության դասական ֆիլմերի ընդգրկման, ռետրոսպեկտիվ (հետահայաց) ցուցադրությունների կազմակերպման համար:<br>Բեռլինի կինոշուկայում միջազգային ասպարեզ բերել հայկական կինոժառանգությունը, ամրապնդել այն կապերը, որոնք կնպաստեն հայ կինոմշակույթի ճանաչմանը, տարածմանը և արժևորմանը:<br>Բեռլինում հայկական տաղավարը դարձնել ճանաչելի հանդիպման վայր այն բոլոր կինոգործիչների համար, որոնք հայ կինոարդյունաբերության նկատմամբ հետաքրքրություն և համագործակցելու ցանկություն են դրսևորում:<br>Հայկական տաղավարում իրականացնել հանդիպումներ, քննարկումներ կինոարտադրության ոլորտի գործընկերների հետ՝ հին կապերը ամրապնդելու և համագործակցության նոր պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով: |
| 3.3 | Անցկացման ժամկետ | 2023թ. փետրվարի 16-22 |
| 3.4 | Անցկացման վայր | Բեռլին,Գերմանիա |
| 3.5 | Ակնկալվող արդյունքներ | Բեռլինի կինոշուկայում Հայաստանի ներկայացվածությունը կնպաստի հայկական կինոարվեստի միջազգային դիրքավորմանը, հայ կինոյի հարյուրամյակի շրջանակներում հայկական տաղավարում և տաղավարից դուրս միջազգային ասպարեզում հայկական հարուստ կինոժառանգության ներկայացվածությանը, իրազեկվածության բարձրացմանը, հայ-եվրոպական և այլ երկրների կինոարտադրողների միջև կապերի |

| | | |
|---|---|---|
| | | ստեղծմանը, զարգացմանը և ամրապնդմանը՝ խթանելով ոլորտի զարգացումը, փոխշահավետ համագործակցությունը, համատեղ կինոարտադրության համար նպաստավոր դաշտի ստեղծումը և միջազգային ճանաչելիությունը:<br>Ավելի կզարգանան և կամրապնդվեն Կինոկենտրոնի միջազգային կապերը և գործունեությունը, ինչի արդյունքում կխթանվի հայ կինոժառանգության և ժամանակակից ֆիլմերի տարածումը ու ճանաչելիությունն աշխարհում: |
| 3.6 | Ոչ ֆինանսական ցուցանիշներ | Եվրոպական կինոշուկայում Հայաստանի մասնակցություն՝<br>Հայաստանի պատվիրակություն՝ 5 հոգի<br>Կատալոգ – 50 հատ<br>Happy Hour-ի հյուրասիրության ակնկալվող հյուրերի և մասնահիցների քանակ – մոտ 100 հոգի<br>Նախատեսվող հանդիպումներ- մոտ 13 |

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունների կատարող՝

_____ Վ. Գասպարյան
Կ.Տ. /ստորագրություն/

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Շ. Միրզախանյան
Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 2
«23» 01 » 2023 թ.
N ՄՇԴ-50-2023 պայմանագրի

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

Բեռլինի միջազգային կինոփառատոնին կից կայանալիք
Եվրոպական կինոշուկային հայկական պատվիրակության մասնակցության ծախսերի

| Հ/Հ | Ծախսատեսակի անվանումը | Չ/Մ | Քանակ | Մեկ միավորի արժեքը (հազար դրամ) | Գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Վարձատրության ծախս, ներառյալ հարկերը, այդ թվում՝** | | | | **84,1** |
| | կատալոգի խմբագիր | մարդ | 1 | 84,1 | 84,1 |
| 2 | **Վարձակալության ծախսեր, այդ թվում՝** | | | | **1412,4** |
| | տաղավարի վարձակալություն՝ 11 քառ.մետր 2475,0 եվրո x 440դ. = 1089,0 հ.դ. | | | | 1 089,0 |
| | մոնիտոր LCD՝ 480,0 եվրո x 440 դ. = 211,2 հ. դ. | հատ | 1 | 211,2 | 211,2 |
| | բազկաթոռ՝ 85 եվրո x 440 դ. = 37,4 հ. դ. | հատ | 2 | 37,4 | 74,8 |
| | փոքր սեղան՝ 40 եվրո x 440 դ. = 17,6 հ. դ. | հատ | 1 | 17,6 | 17,6 |
| | շորի կախիչ՝ 45 եվրո x 440 դ. = 19,8 հ. դ. | հատ | 1 | 19,8 | 19,8 |
| 3 | **Տպագրական ծախսեր, այդ թվում՝** | | | | **1 467,1** |
| | տաղավարի ձևավորում, դիզայնի տպագրություն, տպագրված նյութերի տեղադրում, մոնտաժ և ապամոնտաժ՝ 3334,2 եվրո x 440 դ. = 1467,1 հ. դ. | ծառայու-թյուն | 1 | 1467,1 | 1 467,1 |
| 4 | **Կազմակերպչական ծախսեր,այդ թվում՝** | | | | **150,0** |
| | տաղավարի դիզայն Երևանում | ծառայու-թյուն | 1 | 150,0 | 150,0 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | | **3 113,6** |
| | ԱԱՀ* | | | | **622,7** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ ԱԱՀ** | | | | **3 736,3** |

* ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունների կատարող՝

_____/Վ. Գասպարյան

Կ.Տ. /ստորագրություն/

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

_____/Շ. Միրզախանյան

Կ.Տ. /ստորագրություն/

Հավելված N 3
«27» «01» 2023 թ.
N ՄՇԴ-50-2023 պայմանագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____
Ծրագրի անվանումը _____

| NN | Նախահաշվի հոդվածը | Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով) | Փաստացի գումարը (դրամով) | Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով) | Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| | Ընդամենը | | | | |

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավարը

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

<< ՀԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«28» «01» 2023 թ.
N ՄՇԴ-50 2023 պայմանագրի

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան,Կառավարական տուն 2

ՀՎՀՀ՝ 02698732

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝**

«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ

Հասցե՝ ք.Երևան, Տերյան 3ա

ՀՎՀՀ՝ 01203271

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն՝ _____
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե-ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.Երևան,Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող՝
_____ Կ. Գասպարյան
Կ.Տ. /ստորագրություն/

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
«Հայաստանի ազգայինկինոկենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001744
ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Շ. Միրզախանյան
Կ.Տ. /ստորագրություն/